գուրաց անոնց վերայ, տանք ալ եր-բեւ հոգւոյն Աստուծոյ յանձնեալ ժողովրդոց վերայ հայրապետ խնամե-լով առաջնորդեն զանոնք յուսումն ճշմարիտ կրօնի, բարուց և քաղաքա-կրթութեան: Բանզի անցաւ այն նեղութեան և աններողութեան գա-րերը, և հիմայ շնորհիւ բարեխնամ տէրութեան կը վայելեմք ազատու-թիւն ընչից, ազատութիւն խղճի և որ մեծն է ազատութիւն կրօնի եւ պաշտաման. արդ ուրեմն այսպիսի լուսաւորեալ քաղաքակրթեալ դա-րու մէջ կը պարտաւորին թէ աշխար-հական եւ թէ հոգեւոր գլուխք եւ գլխաւորք՝ ազգին և ժողովրդեան բա-րեկրթութեան հոգել և ջանալ ի լու-սաւորութիւն զանոնք առաջնորդել. յորում կը կայանայ ճշմարիտ կրօնին ու բարոյականին ուսումն:

## ՊԱՏՄԱԿԱՆ

### Օրագրութիւն ուղեւորութեան Տ. Գրի-գորի Շղթայակրի Պատրիարքի Ս. Երուսա-ղէմի յԵրուսաղէմէ ի Կ. Պօլիս:

(Տես թիւ 8. երես 141):

Եւ ի նոյն օրն արքայական նաւն ինեբաւէն ել արտաքս. և ի մարտի տասներեք Վէզիրն մեծ ալայէ ել ի Ստամպօլու՝ գնալ ի պատերազմ ի վե-րայ Նեմչէու. և յԱնառակ որդւոյ կիրակէին եկաք ի սուրբ Աստուա-ծածնի եկեղեցին, և խորհուրդ ա-րարաք, և մարդ յղեցաք առ փռանկ-ացի Լոլլին, զի կամէր բանն հոգա-ցէ. և յօր զարնանամտին եկաք ի սուրբ Գէորգայ եկեղեցին: Եւ ի թուին ՌՃՁԷ (1738) ամին յապրիլի երկրորդ օրն զսուրբ Զատիկն անդ ի սուրբ Գէորգայ եկեղեցին տօնե-ցաք: Ի նոյն ամսոյ քսանեւչորս գնա-ցաք յՍկուտար զսուրբ տօն Համ-բարձմանն Քրիստոսի և զՀոգւոյն Աստուծոյ գալստեանն անդ կատա-րեցաք. և ի յունիսի չորս ի սուրբ Աստուածածնի եկեղեցին եկաք: Եւ զկնի ութ աւուր եկաք յՍկուտար զՎարդավառի տօնն անդ տօնելով: Յօգոստոսի եօթն կիրակին ի Ս. Աստ-ուածածնի եկեղեցին եկաք վասն տօ-նին և վասն ուխտաւորացն Նուբին. որ և զկնի Վերափոխման տօնի Մօրն Աստուծոյ յօգոստոսի քսան եւ մէկ յերկուշաբթի օրն ի տասն ժամու-ցերեկին Աստուծով ել ուխտաւորաց նաւն յԱռալի գանէն (Պաւմգարու) և գնաց. Աստուած բարի ճանա-պարհ տայէ: Եւ ի նոյն ամսոյ քը-սաներկու օրն եկաք յՍկուտար ի վանքն մեր: Եւ ի վերայ հնոյ երեք բաժին խաղողոյ այգեաց զոր ունէաք մերձ յարակից նորա երեք բաժին այլ մեծաւ ջանիւ գնեցաք և խառ-նեցաք ի միմեանս, որ մեծացաւ. և ի ներքոյ օդայէն նոր գինետուն շինել տուաք, զի առաջինն փոքր էր. և ի ճափախի աւելուն ղալըպըն տուաք ա-նել. և ի մէջ պաղչային ամարան նըս-տելոյ տեղ. և այլ պատշաճաւոր շի-նուածք եղեւ: Եւ թէպէտ Երուսա-ղէմայ վանք տէրն, սակայն տեղն սուրբ պատարագի ոչ գոյր. վասն ո-րոյ ի հիւսիսակողմն օդայ մի ի վերայ գետնոյ տուաք շինել և սեղան կանգ-նեցուցաք, և գալով ի գիշերի օծի յանուն Աստուծոյ և մեծի առաքե-լոյն սրբոյն Յակոբայ որդւոյն Զե-բեդեայ. և ի վերայ անարժանս զՔրի-ստոս պատարագեցի, Տէրն հաստա-տուն պահեսցէ, ամէն:

Այլ և ի սուրբ Աստուածածնի ե-կեղեցին Սամաթիօլու սուրբ Երուսա-ղէմացւոց տեղի իջեւանի ոչ գոյր.

digitised by A.R.A.R.@

հին տունյեկեղեցւոյ Հռոմէական զկէսն տուաք քակել, և արդեամբք մերովք շինել մեծ օդայ մի կրկին սրահիւք ներքոյ և վերոյ, վերակացութեամբ մեր մահտեսի Յակոբին որ շատ աշխատեցաւ. և յատկացուցաք տեղին իջեւան գալոց Երուսաղէմայ միաբանից:

Ի հոկտեմբերի տասն եւ չորս Վէզիրն ի պատերազմէն դարձեալ եմուտ ի Ստամպօլ. և ի նոյեմբերի քսան եւ ինն եկաք ի յՈւսկուտարու ի սուրբ Աստուածածնի եկեղեցին, զտօն սուրբ Ծննդեան Տեառն մերոյ անդ տօնեցաք. յառաւօտն մեղսւորս ժամարար ի սուրբ Յովհաննու սեղանն: Ի մարտի տասն եւ մէկ, յերկրորդ շաբաթու պահոց կիրակէին յութ ժամու ցերեկին զ . . . եկէն Մէհմէտ փաշայ Վէզիրն յանկարծ վերուցին եւ ի Ռոտոս սուրկուն արարին ի կորուստն. և զՍավուշ Մէհմէտ փաշայն ի տեղի նորա Վէզիր եդին, և ի վերայ Նեմչէու կրկին ի պատերազմ գնացին բազմութեամբ. իսկ մեք ի մարտի տասն եւ ինն և ի սուրբ Աստուածածնի եկեղեցւոյն ելեալ եկաք ի Գալատու Ս. Հրեշտակապետաց եկեղեցին: Իսկ զկնի աքսորելոյն զՎէզիրն չար եւ հաստատելոյ զՍավուշ փաշայն Վէզիր, ինքն աստ ոչ էր, այլ ի Վախին, վասն որոյ նախ զկնիքն արքային յղեցին Միլիհտարին, և ապա զզօրսն, և յետոյ տեղւոյս Գայմախամն զմեծ սանճախն առեալ բազում զօրօք գնաց մինչ յԱտիրնէ, և նոր Վէզիրն ընդառաջ եկեալ անդ՝ էառ զսանճախն. և Գայմախամն դարձաւ աստ, և նա մնաց անդ: Աստուած զվերջն ի բարին արասցէ. ամէն:

Եւ թէ ոք կամի զորպիսութիւն ելանելոյն մեր ի սուրբ Երուսաղէմէ և գալ ի Ստամպօլ, ստոյգ պատճառն այս է. զի աստուծով զկնի զամթիւ պարտս որքոյ Աթոռոյն հատուցանելոյ, և զբազում տեղիս շինելոյ և նորոգելոյ զսուրբ տեղիսն և զԳահլն մեծ, խորհեցաք զհէթթիշէրիֆն և զամենայն օէնէըս որքոյ Աթոռոյն նորոգել տալոյ, որ և եղեւն իսկ Աստուծով: Զոր տեսեալ զամենայն զայսոսիկ գողոց և ամբարտաւան . . . ազգն Յունաց, դառն նախանձու լցեալ նոցա, թէ ընդէ՞ր ազգն Հայոց զօրացան. և ի Ստամպօլ մեծ աղմուկ յարուցին ի վերայ մեր, թէպէտ չէի անդ. որ և բազում կաշառս տուեալ Գրան մեծամեծաց՝ մինչեւ զԱրքայն եւս դրդեցին, թէ Հայոց ազգն զօռ է արեր Հոռոմաց: Որ և եկեալ յԵրուսաղէմ ի մեծ Գրանէն մարդ, և զնոր հէթթիշէրիֆն (Հայոց) առեալ տարան և ետուն պատռել. զոր գիտէ Տէր՝ զի բնաւ նոցա վնաս ոչ եմք հասուցեալ, և մեզ այսպիսի զրկողութիւն արարին, և զերկու գլխաւոր իշխանսն մեր[1] ետուն ի բանտ արկանել, և կամեցան թէ զազգն մեր ջնջել տայցեն. բայց Տէրն ողորմեցաւ և փրկեաց. բայց յոլով դրամ և մերքն խարջեալ էին, և պարտք աբարեալ. և զկնի մեր գիր և մահզէր յղեցին յԵրուսաղէմ, թէ թարց պատճառի ելեալ գայցես ի Ստամպօլ: Եւ մեք ի թուին ՌՃՁԵ ի մայիսի վեց ելաք յԵրուսաղէմէ յորդաբուխ արտասուօք, և ընդ ծով և ընդ ցամաք բազում խղճութեամբ և տառապանօք եկաք ի Ստամպօլ. և զբազում պարտսն զարարեալս՝ Աստուծով վճարեցաք: Եւ վասն բանին մերոյ ի շատ դրունս անկաք, և ոչ ե-

(1) Մկրտիչ վարդապետ Չամչեան բանտարկուողները երեք հոգի էին կըսէ. բայց և ոչ ինքը ո՛վ ըլլալնին կը յիշէ յանուանէ:



digitised by A.R.A.R.@

ղեւ. յետոյ ի Ֆրանկօլըղի Էնկչի մօտն գնացաք, և նա յանձն էառ զմեր հէփիլէրիֆն առնուլ և մեզ տալ. և զմեր ընէնէփնէրը Բարխին ի ղալէէն վերցընել. զի . . . ազգն Յունաց զամէնն Բարխին առած է առնել. և այս մի ամ եղեւ և այլ աւելի, զի սպասեմք, և նա համբերեցէք ասէ մեզ և ոչ այլ ինչ: Եւ ստոյգն այս է, զի յօրէ յորմէ ի սուրբ Երուսաղէմէ ելեալ եմք մինչեւ ցայժմ, վասն իմ ծուլացեալ մեղաց՝ անյաջողութիւնն զմեզ պատեալ է. բայց փառք և գոհութիւն Աստուծոյ, և ինքն Տէրն ամենայնի մեր խղճմտութեանս ճար և հնար մի արասցէ, և զգործս մեր յաջողեսցէ. ամէն:

Ի նախկին կարգ բանին մեր եկեացուք. զի անդ ի Գալատ սուրբ Հրեշտակապետաց եկեղեցին զսուրբ Պասեքն տօնեցաք. օրհնեալ լիցին յԱստուծոյ քահանայքն եւ ժողովուրդքն, զի անչափ սիրով և մեծարանօք զմեզ պատուեցին: Եւ ի մայիսի մէկ ի Խասգիւղ գնացաք ի տուն Օքսուզ օղլի մահտեսի Աբրահամին, և անդ օթեցաք: Եւ ի մայիսի երկու եկաք յՍկուտար ի մեր վանքն: Յօգոստոսի մէկ եկաք ի Ս. Աստուածածնի եկեղեցին, և անդ զտօն սուրբ Վերափոխմանն կատարեցաք. ժամարար մեղաւորս իմ մեծ զգեստիւն: Եւ յօգոստոսի քսան եւ հինգ ի շաբաթի օրն յերեկոյին ուխտաւորացն աւուն ի Դամղափուէն ուխտաւորօք ել և գնաց, զմեծ զգեստն այլ յղեցի. Տէրն ամենայնի զամենեսին ի սուրբ Երուսաղէմ հասուսցէ խաղաղութեամբ. ամէն:

Եւ ի նոյն շաբաթ երեկոյին եկաք յՍկուտար ի մեր վանքն, և մնացաք անդ՝ զտօն վերացմանն սրբոյ Խաչին ի սուրբ Խաչի եկեղեցին կատարեցաք ի թաղն Սելամսըզ կոչեցեալ. և յետ սակաւուց ի Վարագայ սրբոյ Խաչի բարեկենդանի կիւրակէին՝ մինչ մեք ի Գալատու եկեղեցին էաք, լուաք թէ Սըլոյ Մէքայէլ Կաթողիկոսն յՍկուտար եկեալ է ի մեր վանքն, և զտօն սրբոյն Գէորգայ ի Սուլումանաստրու եկեղեցին կատարեցաք ի միասին . . . : Եւ ի հոկտեմբերի տասն եւ ութն Վեզիր Ալի Փաշայ Մէհմէտ փաշայն ի պատերազմէն դարձեալ՝ եմուտ ի Ստամպօլ մեծաւ փառօք, զՊէլղրատ քաղաքն առեալ: Եւ ի նոյեմբերի մէկն եկաք ի սուրբ Աստուածածնի եկեղեցին վասն գործոյ մերոյ զոր Տէր յաջողեսցէ. և աստ լուաք զմահ սիրելի եղբօրն իմոյ Անրուշի աստուածաբան Յարութիւն վարդապետին, որ ի Յամիթ սուրբ Երուսաղէմայ նուիրակ էր, եկեալ ի Ճնքուշայ վանքն վախճանեցաւ, և անդ թաղեալ կայ. հոգւոյ նորա Աստուած ողորմի. ամէն.

Աստուածով ի թուին ՌՃՁԸ (1739) ի դեկտեմբերի քսաներեք. մեր սուրբ Աթոռոյ հէփիլէրիֆն նորոգեցաւ. եւ մեծազօր Արքայն իւր ձեռագրաւն կնքեաց միջնորդութեամբ ֆռանկարզի բարեպաշտ Էնկչի պէկին. տէր Աստուած իւրն և իւրայնոցն կեանք տացէ. ամէն: Բայց Յոյնքն չարք՝ կըրկին ի նախանձ շարժեալք այսր անդր անկեալք, յետ ամսոյ միոյ և նոքա եւս առին գիր. բայց երկուց ազգաց՝ Հայոցս և Յունաց հրամանն մի եւ նոյն է. զի զինչ որ յերկուց ազգաց ձեռքն (կայ, այնպէս կացցեն), եւ մինչեւ ցայժմ թէ որպէս կենդանավարեալք են, այնպէս վարիցին այժմ և առ յապա. և ընդ միմեանս վէճ, խռովութիւն և կռիւ մի առնիցեն (1).

(1) Այս վէճը այսպէս լմնալէն յետոյ. Գրիգոր և Յովհաննէս երկու Պատրիարքունք Վ. [illegible]

digitised by A.R.A.R.@

Եւ զի յայսմ միջոցի յոլով դրամ խարջեցաւ և կրկին ի ներքոյ պարտուց անկաք, վասն որոյ յորժամ սուրբ պահոց մեծի աւուրքն եկին (1740), երկու յԱստուծոյ օրհնեալ էֆէնտիք սարաֆ և հոգաբարձ փարպեցքն տեսեալ զկարօտութիւնս մեր, լաւ իմտատէ ողորմութիւն ետուն մեզ առ հասարակ ամենեքին. տացէ նոցա տէր Աստուած զիւր առատ ողորմութիւն: Իբրև այս այսպէս եղև, լուան և այլ էֆէնտիք, և նոքա ևս ետուն զողորմութիւն ըստ կարեաց. և նոցա ևս Տէրն ողորմեսցի: Զսուրբ պասեքն ի սուրբ Աստուածածնի եկեղեցին տօնեցաք, և ի նոր կիւրակէին գնացաք ի սուրբ Գէորգայ եկեղեցին, և անտի ի Գալատու սուրբ Հրեշտակապետաց եկեղեցին, և անտի ի Պալաթիոյ սուրբ Լուսաւորչի եկեղեցին. յինանց կիրակէքն ի վերայ գրեալ սուրբ եկեղեցիսն մէկ մէկ պատարագ մեղաւորս մատուցի, բարեաւ մնա ասելով օրհնեալ քահանայից և ժողովրդոց. կրկին եկաք ի Ս. Աստուածածնի եկեղեցին, զտօն սուրբ Երևման և զսուրբ Հոգւոյն Աստուծոյ գալստեան անդ կատարեցաք. և անդ ևս բարեաւ մնա ասելով, ի մայիսի քսան և հինգ անց-

տանին միջնորդութեամբը առաջարկեցին Յունաց Բարդենիոս Պատրիարքին, որ նոյն միջոցները Մելետիոսին յաջորդեր էր, որպէս զի վերջնական խաղաղութեամբ վախճան տալու համար երկու ազգաց մէջ ի վաղուց հետէ ծագած տարաձայնութեանց, դաշնագրութիւն մի ընեն մէջերնին և փոխադարձ ստորագրութեամբ միաձայնեցնեն զիրար և այսպիսի միաբանութիւնները: Յիշեալ Թուղթը Թանգարանիս մէջ կը գտնուի իտալերէն լեզուաւ և Բարդենիոսի ստորագրութեամբ և կնքով, որոյ մէջ կը յիշուի նաև դեսպանին միջնորդութիւնը: Տուեալ է 7 ապրիլ 1739:

Այս դաշնագիրը՝ որ շնորհիւ Ս. Աթոռոյս գրադիր պատուելի Տ. Հ. Թ. Սուքիասեանցին գտնուեցաւ, կրնար օգուտ մի ընել Փօլօս Պատրիարքի ժամանակ եղած վերջին դատերուն մէջ, երբ Յոյնք կրկին դատ բացին Ս. Յակոբեանց վանքին համար:

եալ եկաք յՈւսկուտար ի մեր վանքն: Եւ անդ մնալով ի Վարդավառին. և զկնի տօնին եկաք ի սուրբ Աստուածածնի եկեղեցին, զպատրաստութիւն ճանապարհի տեսանելոյ: Եւ յայսմ միջոցիս թէ զի՞նչ կամ որպէս եղև խղճալի կեանքն իմ, ոչ կարեմ ընդ գրով արկանել. միայն համառօտն այս. զի զկնի տօնի վերափոխման Սուրբ Աստուծոյ, յօգոստոսի քսան և հինգ ելաք ի Սամսոլու և մտաք ի նաւն. բայց և այս ևս մի լոյսի ծածկեալ, զի բազում արդեամբք ի Բիւզանդն մտաք, և յոլով պարտիւք ելաք. և յայնմ գիշերի ի վերայ երկաթի մնաց նաւն, և ի միւս աւուրն ընդ երեկոյ էլչին արարեալ յաջողակ հողմով Աստուծով եկաք ի Թէքիրտաղ. և բազմաւ մեծարանօք զմեզ ընկալան տեղւոյ առաջնորդ սիրելի որդին մեր Յովհաննէս վարդապետն և քահանայքն և ժողովուրդքն. և զմի գիշեր անդ մնալով զառատ ողորմութիւն ևս ետուն: Եւ յետ սրբոյ պատարագին զոր անարժանս մատուցի, բազում շնորհակալութեամբ օրհնելով զնոսա եկեալ մտաք ի նաւն, և խաղաղ հողմով եկաք ոչ սակաւ հեռի ի Պօղազ հիսարու. վասն իմ մեղացն նաւն ծանրաբեռնեալ խրեալ ի մէջ աւազոյն նստաւ. և տասն և ութն ժամ բազում նեղութիւնս կրելով, ի Տեառնէ օգնութիւն հասեալ հազիւ նաւն ի տեղւոյն շարժեալ Աստուծով եկաք ի Պօղազ հիսար. զմի գիշեր անդ օթեցաք:

Եւ անտի ելեալ յայլ կղզին ոչ հանդիպեցաք, և ի գիշերի անցեալ զԹասոս կղզին, ուր ընդ առաւօտն եկեալ տրտմութը ասաց, թէ նաւն ջուր կը քաշէ. և սակաւ առ սակաւ ջրոյն բազմացաւ, զի ջուրն իբրև զաղբիւր հոսիւր. և այր և կին զա-

digitised by A.R.A.R.@

ղաղակ բարձին ։ Իսկ մեք յԱստուած յուսալով՝ քաջ արանց ու խոստովանողաց դրամ խոստանալով հրամայեցաք ըզջուրն քարշել գուլով և ի ծովն հեղուլ. և չորս օր զտիւ և զգիշեր անհանգիստ աշխատութեամբ ի նաւէն զջուրն քարշէին. և որ ի վերայ աւուր յաւելոյր ջուրն. և մեր ամենեցուն ի կենաց յուսահատեալ, եւ միայն ձիչ բարձեալ թէ ի Կիպրոս գնասցուք. և զի հողմ ոչ գոյր, և այն եւս չեղեւ հնար ։ Իսկ անհուն խնամք բարերար մարդասիրին Աստուծոյ հասեալ տառապելոցս, ի շաբաթի օրն ի ցերեկի յութ ժամուն ոմն մի նաւավարացն ի բարձր տեղւոջ ելեալ առ ի դիտել՝ թէ յորում վայրի եմք, գոչեաց յանկարծակի, թէ ահա Եաֆայու լերինքն երեւին. և իբրեւ լուաք, և հաստատեցաւ բանն ասացեալ, ամենեքեանս ի միասին իբր ի խորոց անդնդոց ղաղաղակ բարձեալ մեծաձայն զԱստուած օրհնեցաք ։ Եւ զի հողմ եւս ոչ գոյր, յանկարծ շնչեաց քաղցրագին, և յերեկոյին շաբաթու ի սեպտեմբերի եօթը, Աստուծով եկաք ի նաւահանգիստն Յոպպէ, զոչինչ կըրելով վնաս. և գտաք անդ եկեալ ըզսիրելի որդին իմ զաթոռակալ Գաբրիէլ աստուածաբան վարդապետն եկեալ ընդ առաջ մեր. զթարգման տիրացու Պօղոսն, և զայլ կարգաւոր միաբանսն. և տեսեալ զմիմեանս արտասուախառն խնդութեամբ գոհացաք զԱստուած ։ Եւ ի վաղիւն զտօն ծննդեան սուրբ Աստուածածնին կատարեցաք. և զքանի օր անդ մնալով, ապա եկն սրբոյ քաղաքի մուսէլլիմ խուլ Մուստաֆայ աղա անուն, եւ այլք բազումք ընդ նմա ։ Եւ անտի ելեալ եկաք ի Ռէմլէ ի սուրբ Գէորգ վանքն մեր. զտօն վերացման սըրբոյ Խաչին անդ կատարեցաք. Եւ ի սեպտեմբերի տասն եւ հինգ, յերկուշաբթի օրն բազում ամբոխիւ երկու Մուսէլլիմօք Տեառն յաջողմամբ եկեալ մտաք յԵրուսաղէմ յերկնահանգէտ սուրբ Աթոռս Քրիստոսի. և ի տեսանել զսուրբ տունս և զմիաբան եղբայրութիւնս՝ երկնային խընդութեամբ լցեալ, մեծաւ բարձանօք համբուրելով զսուրբ Գողգոթին և զսուրբ խորանսն լուսոյ՝ երկրպագած դիմօք և բազում արտասուօք գոհանալով զԱստուծոյ ։

Գրիգոր հայրապետ իւր ուղեւորութեան պատմութիւնը այսպէս վերջացընելէն յետոյ, սկիզբէն մինչեւ վերջը այսինքն չորս տարուան և չորս ամսուան և ինը օրուան մէջ ինչ ծախք որ ըրած է, հանդերձ եկամուտը կը յիշատակէ, և հաշուէկշիռը յայտնի մէջ կը բերէ, որ է 238·557 ղուրուշ։ Եկամուտն է սուրբ Աթոռէն հետը տարածն և ետքէն բերել տուածը, նուիրակութիւներէ եղած արդիւնքները, իւր ձեռօք ընդունած ողորմութիւնը, էսնաֆներէ իմտատէն, և փոխառութիւն ։ Իսկ ծախուց մէջ նըշանաւոր է մի միայն հաթթիշէրիֆի համար տուածը որ է 84·350 ղուրուշ, ասկէ զատ է Բ․ Դրան մարդոց տուածները 6000 ղուրուշ. Դարձեալ այն 238·557 գումարէն զատ է Երուսաղէմ դառնալուն քաղաքացի տաճկաց, շէխից և այլոց ընծայած պարգեւները, "զորս ոչ կարացաք, կ'ըսէ, գրել վասն բազմութեան առօղացն"։ Այն հաշիւները, զոր ամենայն ճշդութեամբ մէջ կը բերէ, կնքելով Սրբազան Հայրապետը քաղցր ուրախութեամբ և իբր ի ծանր բեռէ թեթեւցածի պէս կը գրէ, ի ծանօթութի ապագայից թէ ինչ պարտք

digitised by A.R.A.R.@

որ ըրի ի Պոլիս, բոլորն ալ հանդերձ շահոմն հատուցի, և չմնաց պարտք Աթոռին վերայ, զոր հաթթիշէրիֆին պատճառաւ ըրած էր. «Բայց, կ՚ըսէ, դատ արացէ Աստուած ընդ մեզ և ընդ հակառակորդսն մեր, զի ի յետին դառն աղքատութեան և ի չքաւորութեան զմեզ հասուցին սորա ազգն Յունաց։ Վասն որոյ ես մեղապարտ Գրիգոր պետս կոչեցեալ սպասաւոր սրբոյ Աթոռոյս, իբր անդարձ և կտակ գրեմ զկնի մեր եկելոցդ, մի և մի իւիք հաւատայք Յունաց և Լատինացւոց. զի այլազգիքն միայն վասն արծաթոյ նեղեն զմեզ, այլ սոքա վասն սուրբ հաւատոյս մերոյ և մեր բաժին սուրբ Տեղեացն և մերոյ Աթոռոյս են միշտ ներհակք և անհաշտ թշնամիք ընդ մեզ. վասն որոյ միշտ պատրաստ լինել պիտոյ է ի նոցանէ. զի ես փորձիւ իմացայ և ձեզ գրեցի՝ զի ծանիջիք. յորոց փրկեսցէ տէր Աստուած զսուրբ Աթոռս և զազգն մեր ի նոցա չարեացն. ամէն»։

Լատին միաբանութեան համար ալ ըրած գանգատանաց պատճառ. նոյն տարին սուրբ Յարութեան Տաճարին մէջ աւերածութեան համար Հայ միաբան մի մահու չափ ծեծելնին է, որ մեծ դատերու և ծախուց պատճառ եղած է։ Այս դէպքս մանրամասնաբար գրուած է նոր հեղինակեալ Երուսաղէմայ ժամանակագրութեանը մէջ, ուր կը տեսնուին նաև Գրիգոր Պարոնտէրին այն առթիւ առ Գաղղիոյ թագաւորը, առ երկրորդն իւր, առ դեսպանն ի Կ. Պոլիս, ի Հռովմ առ Ժողովն Կարտինալաց գրած բողոքագիրներուն օրինակները։

Վ. Էրջ.

Անողոքելի մահուան անողորմ հարուածները երբ մէկ կողմէն ընդհանուր ազգին սիրտը ծանրաթախիծ սգով կը լեցընէ, աստուածային Նախախնամութիւնը իւր անհուն ողորմութեամբը զանիկայ մխիթարելու համար, կամ յառաջ կամ յետոյ իւր խնամքը կը յայտնէ։ Այսպէս Պալեան գերազնիւ Ամիրային մահուանէն առաջ, ամենողորմած Կայսեր յիշեցընելով Տատեան վսեմաշուք գերդաստանին բազմաժամանակեայ հաւատարմութիւնը և անձնանուէր ծառայութիւնը, զոր կը վարէր արքունի վառօդապետութեան պաշտօնին մէջ, և քանի մի տարիէ ի վեր ուրիշի յանձնուած էր, այս անգամ վերանորոգեց նոյն բարձր պաշտօնը Տատեան գերապատիւ և ազգասէր Յովհաննէս Պէյին վերայ, զոր շնորհաւորելով ի դիմաց ընդհանուր միաբանութեանս, կը բարեմաղթեմք Նորին Գերազնուութեան և բովանդակ գերդաստանին պարզերեսութիւն ի ծառայութեան և յարատեւութիւն ի յաջողութեան։

— Ուրախ եմք դարձեալ լսելով Զէյթունցի չորս գլխաւորաց ազատութիւնը, զոր ստացած են ազգային Վարչութեան շնորհիւը, և հիմակ ամեն հանգիստ ու անդորրութիւն կը վայելեն սուրբ Աթոռոյս փոխանորդարանին մէջ։ Կը յուսամք որ իրենց ազատութեան լուրը արդէն Զէյթուն ալ հասնելով՝ բոլոր հայրենակիցացը տրտմութիւնն ու կասկածները ուրախութեան փոխած է։

— Յայտնի է արգոյ ընթերցողաց Գեր. Յակոբ Սրբազան եպիսկոպոսին Ս. Աթոռոյս կալուածոց այցելութ̃ե խրկուիլը Ամեն. Սրբազան Պատրիարք Հօր յատուկ հրահանգներով, որոնց

digitised by A.R.A.R.@